ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ Գասումյան Մ. Շ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Քրեագիտական որոնողական գործունեություն, ապացուցման նույնականացում

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ

ԵՐԵՎԱՆ

1. **Ներածություն**

Հանցագործության բացահայտման և հետաքննության գործում կարևորագույն տեղ է զբաղեցնում որոնողական գործունեությունը, որը հանցագործությունների բացահայտման և հետաքննության ենթահամակարգն է, ունի իր նպատակները, խնդիրները, ինչպես նաև օբյեկտները, միջոցներն ու մեթոդները և իրենից ներկայացնում է քրեագիտական նշանակություն ունեցող տեղեկատվության աղբյուրների որոնում և հայտնաբերում: Քրեագիտական որոնողական գործունեություն՝ հանցագործության բացահայտման եւ հետաքննության նպատակով դրա համար պատշաճ լիազորված անձանց գործունեություն է, որն ուղղված է անհայտ նյութական օբյեկտների հայտնաբերմանը ՝ իրենց հետքերով եւ հետաքննվող իրադարձության հետ նրանց կապը պարզելուն: Մասնավորապես, որոնողա-նույնականացման գործունեության ընթացքում հայտնաբերվող փաստերը կարող են դառնալ քրեական գործում ճշմարտության հաստատման միջոց, բայց միայն այն դեպքում, եթե դրանք ապացուցված են: Կարեւոր տեսական եւ գործնական նշանակություն ունի քննիչի, դատարանի, մասնագետի եւ փորձագետի գործունեությունն ուղղորդող եւ դատական գործընթացում ստացվող եզրակացությունների հավաստիությունն ապահովող նույնականության ապացուցման սկզբունքների ձեւակերպումը:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրը.**

«Քրեագիտական որոնողական գործունեություն, ապացուցման նույնականացում» ուսումնական ծրագրի նպատակն ձևավորել ուսանողների մոտ ընդհանուր մշակութային և մասնագիտական բանիմացություն, որն անհրաժեշտ է հետագայում իրավական նորմերի հաջողակ իրականացման, օրինականության և իրավակարգի ապահովման, իրավական ուսուցման և դաստիարակման համար, ինչպես նաև մագիստրանտների պատրաստմանն ինքնուրույն գործունեությանը՝ կապված ապացուցման սուբյեկտների մասնագիտական գործունեության մեջ ստացված գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման հետ:

Ուսուցման ծրագիրը նաև նպատակ ունի խորացնել քրեագիտության և ապացուցման տեսության որորտի գիտելիքները, ծանոթացնել ապացուցման

դատավարական և քրեագիտական միջոցների հետ, ցույց տալ պրոբլեմները և դրանց հաղթահարման ճանապարհները, ձևավորել ապացուցման առավել բարդ հարցերի լուծման գործնական հմտություններ դատավարական և քրեագիտական գիտության տեսակետից:

2.1. Կրթական վերջնարդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները պետք է՝

իմանան՝

- նյութական և դատավարական իրավունքի նորմերը, դրանց նշանակությունը ապացուցման գործընթացի իրավական կարգավորման մեջ,
- ապացուցման հիմնական հասկացությունները և բովանդակությունը,
- ապացուցման տրամաբանական և հոգեբանական հիմունքները

կարողանան՝

- իրականացնել ապացուցման դատավարական և քրեագիտական միջոցները,
- իրականացնել ապացուցման տեխնիկական և տակտիկական միջոցները,

ունակ լինեն՝

- ճիշտ որոշել ապացուցման գործընթացի այդ կամ այն իրավիճակում արդյունավետ տեղեկատվական, տրամաբանական, տեխնիկական ու տակտիկական ապացուցման միջոցները,
- հետազոտել ապացուցման առանձին քրեագիտական միջոցները քաղաքացիական և վարչական դատավարություններում:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 Կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1.Ըստ կիսամյակի ընդհանուր	72		72				

դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը							
1.1. Լսարանային պարապմունքներ:	**18**		**18**				
1.1.1.Դասախոսություններ	**10**		**10**				
1.1.2.Սեմինարներ	**8**		**8**				
1.2. Ինքնուրույն աշխատանք	**54**		**54**				
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգարք**		**Ստուգարք**				

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	**Ընդհանուր (ակ. ժամ)**	**Դասախոսություններ (ակ. ժամ)**	**Սեմինար (ակ. ժամ)**	**Պարապմունքների այլ տեսակներ(ակ. ժամ)**
Թեմա 1. Ապացուցման միջոցները քրեական դատավարությունում	**7**	**1**		**6**
Թեմա 2. Ապացուցման քրեագիտական միջոցների ընդհանուր բնութագրումը	**7**	**1**		**6**
Թեմա 3. Ապացուցման տեխնիկական քրեագիտական միջոցները	**8**	**1**	**1**	**6**
Թեմա 4. Ապացուցման տակտիկական քրեագիտական միջոցները	**8**	**1**	**1**	**6**
Թեմա 5. Ապացուցման տրամաբանական հիմունքները	**8**	**1**	**1**	**6**
Թեմա 6. Ապացուցման հոգեբանական հիմունքները	**8**	**1**	**1**	**6**
Թեմա 7. Տեղեկատվական գործընթացները ապացուցման մեջ	**7**	**1**		**6**
Թեմա 8. Ապացուցման քրեագիտական միջոցների կիրառման հարցերը փաստաբանի աշխատանքում	**9**	**1**	**2**	**6**
Թեմա 9. Ապացուցման քրեագիտական միջոցները քաղաքացիական և վարչական դատավարությունում	**10**	**2**	**2**	**6**
Ընդամենը	**72**	**10**	**8**	**54**

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. Ապացուցման միջոցները քրեական դատավարությունում:

Ապացուցման միջոցների ընդհանուր հատկանիշները: Քրեական գործընթացում ապացուցման միջոցների դասակարգումը քրեական դատավարությունորմ: Քննչական գործողությունները որպես ապացուցման կարևորագույն միջոց քրեական դատավարության մինչդատական փուլերում: Ցուցմունքներ ստանալու հետ չկապված առանձին քննչական գործողությունների վարույթի իրավական կարգավորումը: Քրեական գործով մինչդատական վարույթի ընթացքում ցուցմունքներ ստանալու հետ կապված քննչական գործողությունները: Քրեական գործով վարույթի մինչդատական փուլերում ապացուցման այլ միջոցներ: Դատական փորձաքննության նշանակումը՝ որպես ապացուցման միջոց:

Թեմա 2. Ապացուցման քրեագիտական միջոցների ընդհանուր բնութագրումը:

Ապացուցման քրեագիտական միջոցների հասկացությունը և էությունը: Ապացուցման քրեագիտական միջոցներին ներկայացվող պահանջները:

Թեմա 3. Ապացուցման տեխնիկական քրեագիտական միջոցները

Ապացույցների հայտնաբերման էությունը և եղանակները: Գիտատեխնիկական միջոցների օգտագործումը ապացույցների հայտնաբերման նպատակով: Տեխնիկական միջոցների օգտագործման արդյունքների ապացուցողական նշանակությունը: Ապացույցների դատավարական ամրապնդման հասկացությունը և նշանակությունը: Ապացույցների արձանագրման ձևերը և մեթոդները: Քննչական գործողությունների ընթացքի և արդյունքների արձանագրումը: Պոլիգրաֆի կիրառումը օպերատիվ-հետախուզական և քննչական գործունեության մեջ:

Թեմա 4. Ապացուցման տակտիկական քրեագիտական միջոցները

Ապացուցման դատավարական և տակտիկական տեսանկյունը, դրանց փոխադարձ կապը: Քննչական գործողության դատավարական ընթացակարգը և տակտիկան:

Քրեագիտական տակտիկայի ելակետային հասկացությունները՝ տակտիկական եղանակ, տակտիկական համադրումներ և տակտիկական օպերացիա: Տակտիկական եղանակների և դրանց համադրումների թույլատրելիության չափանիշները:

Թեմա 5. Ապացուցման տրամաբանական հիմունքները

Քրեադատավարական ապացուցման նպատակը: Տրամաբանության դերը քրեական գործով ապացուցման գործընթացում: Տրամաբանական ապացուցման կառուցվածքը: Տրամաբանական ապացույցը և քրեադատավարական ապացուցումը: Տրամաբանության օրենքների նշանակությունը քրեական գործով ապացուցման գործընթացում: Քրեադատավարական ապացուցման մեջ օգտագործվող կանխավարկածի տրամաբանական ր իրավական բնույթն ու նշանակությունը: Հավաստիությունը և հավանականությունը քրեական դատավարության: Ներքին դատական համոզմունքի ձևավորման պայմանները: Տրամաբանության օրենքները և մեթոդները ապացուցման գործընթացում: Հաստատումն ու հերքումը ապացուցման մեջ:

Թեմա 6. Ապացուցման հոգեբանական հիմունքները

Տակտիկական ռիսկի պայմաններում քննիչի գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Ապացուցման սուբյեկտների ներքին համոզման ձևավորման հոգեբանական հիմքերը: Ներքին համոզման ձևավորման փուլերը՝ որոշակի հանգամանքների, նյութերի վերլուծություն (նշված փուլին նախորդում է զգայական ճանաչում), վերլուծության արդյունքների համադրումը այլ նյութերի հետ:

Ներքին համոզմունքը պետք է համապատասխանի որոշակի պահանջներին՝ հիմնված լինի օրենքով սահմանված կարգով հավաքված ապացույցների վրա, ապացույցները պետք է ստուգված լինեն, յուրաքանչյուր ապացույց պետք է դիտարկվի առանձին և այլ ապացույցների համակցությամբ:

Թեմա 7. Տեղեկատվական գործընթացները ապացուցման մեջ

Ապացույցների կուտակումը որպես հավաստելիության հասանելիության հիմնական եղանակ ապացուցման մեջ: Հավանականության դերը և ճանաչողական

նշանակությունը ապացուցման մեջ։ Հավանականությունից հավաստելիության անցման կառուցվածքը։ Ապացույցների բավականաչափության հասկացությունը։ Հնացագործության առանձին տեսակների քննության մեթոդիկան։ Մասնավոր քրեագիտական մեթոդիկաների ձևավորման հասկացությունը, սկզբունքները և ելակետային դրույթները։ Ապացույցների ալգորիթմացման արդի խնդիրները։ Ապացուցման ալգորիթմի հասկացությունը։

Թեմա 8. Ապացուցման քրեագիտական միջոցների կիրառման հարցերը փաստաբանի աշխատանքում

Փաստաբանի մասնակցությունը քրեական գործով ապացույցների հավաքմանը, ստուգմանը, գնահատմանը և օգտագործմանը։ Փաստաբանի մասնակցությունը առանձին քննչական գործողություններին։ Փաստաբանի կողմից իր գործունեության մեջ գիտատեխնիկական միջոցների և տակտիկական հնարքների օգտագործումը։ Քրեական գործով ապացույցների տարբեր տեսակներով փաստաբանի աշխատանքի առանձնահատկությունները։

Թեմա 9. Ապացուցման քրեագիտական միջոցները քաղաքացիական և վարչական դատավարությունում

Ապացուցման քրեագիտական միջոցները վարչական և քաղաքացիական դատավարությունում՝ գործին մասնակցող անձանց բացատրությունները, ցուցմունքները, գրավոր ապացույցներին, իրեղեն ապացույցները, փորձաքննությունը։

Քաղաքացիական (վարչական) գործերի քննության ժամանակ ապացուցման քրեագիտական ապահովման անհրաժեշտությունը։

4. Գրականության ցանկ

Պարտադիր գրականություն

1. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային Ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 1 հուլիսի 1998 թ.
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 թ.
4. Օհանյան Լ.Պ. Կրիմինալիստիկա, Երևան, 2010, - 512 էջ:
5. Չախոյան Ա.Ս., Մասնաետի գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինաիստիկական հիմնախնդիրները: Երևան, ԵՊՀ հրատ., 2013:
6. Ենգիբարյան Վ.Գ., Չախոյան Ա.Ս., Կրիմինալիստիկայի գործնական հիմունքները, Երևան, 2013:
7. Մելքոնյան Դ. Ապացույցների թույլատրելիության պայմանների ընդհանուր բնութագիրը | Իրավագիտության հարցեր, թիվ 4, 2005, էջեր 47-55.
8. Վահե Ենգիբարյան Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա | Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, 732 էջ
9. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: | Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ
10. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը | Մենագրություն, Երևան, Անտարես, 2016, 256 էջ
11. Ենգիբարյան Վ. Գ. Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդկիա (Կրիմինալիստիկական մեթոդիկա) | Ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 416 էջ
12. «Ժամանակակից գիտական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը փորձաքննության ոլորտում» Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵրևանԾաղկաձոր, 16-17 հունիսի 2015թ./ ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների

ազգային բյուրո, խմբ. Խորհուրդ՝ Ա.Ջավադյան և ուրիշ.- Երևան-Ծաղկաձոր, 2015, 245 էջ:

13. «Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության եվ քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերի (թեզիսների) ժողովածու նվիրված հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի«փորձաքննությունների ազգային բյուրո» պոակ-ի հիմնադրման 15-ամյակին 2019թ. սեպտեմբերի 25-27, Երևան
14. Боннер А.Т. Традиционные и нетрадиционные средства доказывания в гражданском и арбитражном процессе : монография / А.Т. Боннер. – М.,: Проспект, 2014. - 614 с
15. Лазарева, В. А. Доказывание в уголовном процессе: учебник для бакалавриата и магистратуры / В. А. Лазарева. - 5-е изд., перераб. и доп. - М. : Издательство Юрайт, 2017. - 359 с.
16. Решетникова, И. В. Доказывание в гражданском процессе: учеб.-практ. пособие для бакалавриата и магистратуры / И. В. Решетникова. - 5-е изд., перераб. и доп. - М. : Издательство Юрайт, 2017. - 377 с.
17. Справочник по доказыванию в административном судопроизводстве / Решетникова И.В., Куликова М.А., Царегородцева Е.А. - М.:Юр.Норма, НИЦ ИНФРА-М, 2017. - 128 с.
18. Орлов Ю.К. Современные проблемы доказывания и использования специальных знаний в уголовном судопроизводстве: учебное пособие / Ю.К. Орлов; Московский государственный юридический университет имени О. Е. Кутафина (МГЮА). – М., Проспект, 2016. - 213 с.

Լրացուցիչ գրականություն

1. Бастрыкин, А.И. Криминалистика. Техника, тактика и методика расследования преступлений: науч.-практ. пособие / А.И. Бастрыкин.– СП б.: Юрид. центр Пресс (Асланов Р.), 2010. – 459 с.

2. Драпкин, Л.Я. Криминалистика: учебник / Л.Я. Драпкин, В.Н.Карагодин. – М., 2008. – 663с.

3. Егоров, Н.Н. Криминалистика / Н.Н. Егоров, Е.П. Ищенко, Н.Е. Мерецкий – Владивосток: И зд-во ТГЭУ , 2010. – 256 с.

4. Зайцев, В.Н. Криминалистика: учеб. пособие / В.Н. Зайцев, А. Хаитжанов // Федер. агентство по образованию, Пенз. гос. ун-т. – Пенза: Изд-во ПГУ, 2009. – 293 с.

5. Эксархопуло, А.А. Криминалистика: учебник / А.А. Эксархопуло. – СП б.: Лема, 2009. – 902 с.

6. Суденко, В.Е. Криминалистика: учебник / В.Е. Суденко. – Пятигорск: Изд-во Сев.-Кавк.ГТУ , 2008. – 575 с.

7. Доказывание по уголовному делу: схемы и таблицы : учебное пособие / А.Х. Гарифуллина, Д.Р. Марданов, С.Я. Казанцев, Ф.Р. Хисамутдинов. - Москва : Юнити-Дана, 2015. - 87 с.

8. Шаталов, А.С. Доказательства и доказывание в уголовном судопроизводстве: учебнометодическое пособие / А.С. Шаталов. - Изд. 2-е, стер. - Москва; Берлин : Директ-Медиа, 2016. - 126 с.

9. Галяшин, Н.В. Показания с «чужих слов» как производные доказательства в уголовном процессе: монография / Н.В. Галяшин. - Москва : Проспект, 2017. - 176 с.

10. Доля, Е.А. Формирование доказательств на основе результатов оперативно-розыскной деятельности: монография / Е.А. Доля. – М.: Проспект, 2015. - 376 с.

11. Логика уголовно-процессуального доказывания : учеб. пособие / С.В. Корнакова. - М.: ИНФРА-М, 2017.

12. Левченко О. Доказательства и процесс уголовно-процессуального доказывания: учебное пособие. Оренбург, 2014, 123 с.

13. Основы теории доказательств в уголовном процессе России: Учебное пособие / Е.А. Артамонова, О.В. Фирсов. - 4-е изд., испр. и доп. - М.: Норма: НИЦ ИНФРА-М, 2014 – 240 с.

14. Доказательства и доказывание по уголовным делам: проблемы теории и правового регулирования: Монография / С.А. Шейфер. - 2-е изд., испр. и доп. - М.: Норма: НИЦ ИНФРА-М, 2014. - 240 с.

15. Белкин, А. Р. Теория доказывания в уголовном судопроизводстве в 2 ч. Часть 1 : учебное пособие для вузов / А. Р. Белкин. - 2-е изд., испр. и доп. - М. : Издательство Юрайт, 2017. - 231 с.

16. Белкин, А. Р. Теория доказывания в уголовном судопроизводстве в 2 ч. Часть 1: учебное пособие для вузов / А. Р. Белкин. - 2-е изд., испр. и доп. - М. : Издательство Юрайт, 2017. - 231 с.

Պաշտոնական համացանցային ռեսուրսներ

1. ՄԱԿ – URL: http://www.un.org/ru
2. Եվրոպայի խորհուրդ – URL: http://www.coe.int/ru
3. ԱՊՀ – URL: http://www.e-cis.info
4. Քննչական կոմիտե - URL: http://www.investigative.am
5. Հատուկ քննչական կոմիտե - URL: http://www.ccc.am
6. ՀՀ դատախազություն - URL: http://www.genproc.am
7. ՀՀ ոստիկանություն - URL: http://www.police.am
8. ՀՀ արդարադատության նախարարություն - URL: http://www.judge.am

5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքրերի փոխանակում կոնկրետ առաջադրված իրավական հարցերի և խնդիրների վերաբերյալ: Գնահատման չափանիշները. Տեսական

պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, բարեկիրթ վերաբերմունք խմբի անդամների հետ:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում. Գնահատման չափանիշ: պլանի առկայություն, օգտագործված գրականության ցանկ,հղումների ճշգրտությունը, պատճառաբանվածություն.

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները:

6. Պրակտիկ բլոկ

Սեմինար և պրակտիկ պարապմունքների պլան:

Պարապմունքի տեսակ – տրամաբանական հարցերի և խնդիրների լուծում:

Ստուգման ձևը: բանավոր հարցում:

Թեմա 1. Ապացուցման միջոցները քրեական դատավարությունում:

Հարցեր քննարկման համար:

1. Նշեք քրեական դատավարությունում ապացուցման միջոցների հասկացությունը եւ համակարգը:
2. Թվարկեք պացուցման միջոցների ընդհանուր հատկանիշները
3. Բնութագրեք ննչական գործողությունները որպես ապացուցման կարևորագույն միջոց:
4. Բնութագրեք փորձաքննությունը որպես ապացուցման կարևորագույն միջոց:

Թեմա 2. Ապացուցման քրեագիտական միջոցների ընդհանուր բնութագրումը:

Հարցեր քննարկման համար:

1. Ինչպիսին են ապացուցման դատավարական եղանակները:
2. Նշեք ապացուցման քրեագիտական միջոցները:

3. Տվեք ապացուցման քրեագիտական միջոցներին ներկայացվող պահանջների ընդհանուր բնութագիրը:

Թեմա 3. Ապացուցման տեխնիկական քրեագիտական միջոցները

Հարցեր քննարկման համար:

1. Նշեք ապացույցների հայտնաբերման եղանակները:
2. Ինչ է իրենից ներկայացնում ապացույցների հայտնաբերման քրեագիտական եղանակը:
3. Ինչպիսի նշանակություն ունեն գիտատեխնիկական միջոցների օգտագործման արդյունքները:
4. Քննությանը հատուկ գիտելքիների տիրապետող անձանց մասնակցության ինչպիսի ձևեր կարող եք նշել:
5. Տվեք ապացույցների արձանագրման ձևերի և մեթոդների ընդհանուր բնութագիրը:
6. Բնութագրեք պոլիգրաֆն որպես հանցագործության մասին տեղակտվության ստացման միջոց:

Թեմա 4. Ապացուցման տակտիկական քրեագիտական միջոցները

Հարցեր քննարկման համար:

1. Բնութագրեք քրեագիտական տակտիկայի հիմնական հասկացությունները:
2. Ինչպիսին է քննչական գործողությունների կատարման ալգորիթմը:
3. Ինչպես են հարաբերակցվում տակտիկական եղանակի և ապացույցների թույլատրելիությունները:
4. Ինչպես է ազդում քննչական իրավիճակը տակտիկական եղանակի ընտրության վրա:
5. Անվանեք հոգեբանական կոնտակտի հասանելիության եղանակները:
6. Ինչ է իրավաչափ հոգեբանական ներազդեցությունը:

Թեմա 5. Ապացուցման տրամաբանական հիմունքները

Հարցեր քննարկման համար:

1. Ապացուցման տրամաբանության օրենքները և եղանակները։
2. Ապացուցման գործընթացի ճանաչողական և գործնական կողմերը։
3. Քրեագիտական վարկածն որպես քննության կազմակերպման տրամաբանական հիմք։
4. Հանցագործության քննության կազմակերպումը։
5. Ապացույցների գնահատման էությունը և նշանակությունը։
6. Ապացույցների օգտագործման էությունը և ձևերը։

Թեմա 6. Ապացուցման հոգեբանական հիմունքները

Հարցեր քննարկման համար։

1. Անձնական ապացույցների ձևավորման մեխանիզմը։
2. Քննիչի գործունեության հոգեբանական առանձնահատկությունները տակտիկական ռիսկի և տեղեկատվական անորոշության պայմաններում։
3. Քննության հակազդեցության տիպիկ ձևերը և եղանակները։
4. Ապացուցման սուբյեկտների ներքին համոզվածության ձևավորման հոգեբանական հիմունքները։
5. Ներքին համոզվածությունն որպես մեթոդ և որպես գնահատման արդյունք։

Թեմա 7. Տեղեկատվական գործընթացները ապացուցման մեջ

Հարցեր քննարկման համար։

1. Նշեք տեղեկատվական գործընթացի փուլերը հանցագործության քննության ընթացքում։
2. Ինչպիսին է ապացուցման նպատակը քրեական գործերում։
3. Նշեք հավանականությունից հավաստելիության անցման փուլերը։
4. Տվեք հանցագործության քննության ալգորիթմիի ընդհանուր բնութագիրը։
5. Ինչպիսին են ապացուցման ալգորիթմի էլեմենտները։

Թեմա 8. Ապացուցման քրեագիտական միջոցների կիրառման հարցերը փաստաբանի աշխատանքում

Հարցեր քննարկման համար:

1. Փաստաբանի մասնակցությունը քրեական գործով ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման և օգտագործման մեջ:
2. Պաշտպանության ալգորիթմիզացումը:
3. Պաշտպանական իրավիճակի հասկացությունը և էությունը:
4. Պաշտպանության վարկածը և դիրքը:
5. Փաստաբանի աշխատանքի առանձնահատկությունները քրեական գործով ապացույցների տարբեր տեսակների հետ:

Թեմա 9. Ապացուցման քրեագիտական միջոցները քաղաքացիական և վարչական դատավարությունում

Հարցեր քննարկման համար:

1. Քրեագիտական տեխնիկայի միջոցների օգտագործման էությունը քաղաքացիական և վարչական դատավարության մեջ:
2. Քրեագիտական տակտիկայի միջոցների օգտագործման էությունը քաղաքացիական և վարչական դատավարության մեջ:
3. Նույնականացման տեսության դրույթները: Քրեագիտական ուսմունքը վարկածի մասին: Հետքաբանության առանձին դրույթները: Գիտատեխնիկաան միջոցների օգտագործման առանձնահատկությունները: Փորձաքննության նշանակման հարցերը վարչական դատավարության մեջ:

7. Մեթոդական բլոկ

Ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովումը:

- Ուսուցման մեթոդները դրանք դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

- Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:
- Դասավանդման մեթոդներն այն մեթոդներն են, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ:
- Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորում են կարողություններ և հմտություններ:
- Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:
- Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- Լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից:
- Կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում:
- Լինեն բազմատեսակ:
- Խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության:
- Համապատասխանեն ուսուցման նպատակներին:
- Ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը:
- Ուսանողների և դասախոսների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ:

- Համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին, դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: